ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1950 Общественные науки

Հ. Մելքոնյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱՅԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան դարերով ճնշված ազգությունների ազատագրման համար մի նոր դարաշրջանի սկիզբ դրեց։ Այդ ռևոլուցիայի հաղթանակով ոգնշնչված, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները բոլշևիկների պարտիայի և նրա հանճարեղ առաջնորդներ Լենինի և Ստալինի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի և հերոսական Կարմիր Բանակի օգնությամբ, 1920 թ. նոյեմբերի 29-ին տապալեցին հայ ժողովրդի գահիճ դաշնակների կառավարությունը և Հայաստանում հաստատեցին սովետական կարգեր։

«Միայն Սովետական իշխանության դաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն»։[1]

Բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ կազմակերպվեց Հայաստանի ապստամբ բանվորների և գյուղացիների իշխանության օրգանը՝ Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն՝ Հայռևկոմը։

Հայռևկոմը հանդիսացավ հայ ժողովրդի ազգային անկախ պետության, պետական իշխանության անդրանիկ օրգանը։ Հայռևկոմի 1920 թվի նոյեմբերի 29-ի դեկլարացիան, որով Հայաստանը հայտարարվեց Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա՝, *բացեց հայ ժողովրդի և նրա կոնստիտուցիայի պատմության նոր և ամենապայծառ էջը։*

Ռևկոմը անմիջապես ձեռնամուխ եղավ վինված ապստամբության ղեկավարման, հին պետական ապարատի ոչնչացմանը և նոր ռևոլուցիոն ապարատի ստեղծման գործին, ինչպես կենտրոնում, նույնպես և տեղերում՝ կազմակերպելով Գավառային, Գավառակային և Գյուղական Ռևկոմներ։ Իբրև կենտրոնական օրգան, նա իր իշխանությունը իրականացնում և իր ղեկավար ազդեցությունը երկրի վրա տարածում էր տեղերում կազմակերպվող Ռևկոմների միջոցով, ամրացնում էր սոցիալիստական ռևոլուցիան տեղերում և ձեռնարկում քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնմանը։

Հայռևկոմի սիստեմում պետական կառավարման տարբեր բնագավառներ ղեկավարելու համար՝ նրա համապատասխան որոշումներով կազմակերպվեցին մի շարք ժողովրդական կոմիսարիատներ՝ ներքին գործերի, պարենավորման, ռազմական, ֆինանսների, գյուղատնտեսության, լուսավորության, արդարադատության, փոստ-հեռագրական, աշխատանքի, սոցիալական ապահովության, արտաքին գործերի, արտաքին առևտրի, առողջապահության, բանվորա-գյուղացիական տեսչության, ինչպես և ժողովրդական տնտեսության խորհուրդ։ Այդ կոմիսարիատները տեղական ռևկոմներում ստեղծեցին իրենց համապատասխան բաժինները։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 4, էջ 418։

Վերոհիշյալ բոլոր ժողովրդական կոմիսարիատները մինչև 1921 թ. մայիս ամիսը կից էին Հայռևկոմին և, կառավարման ֆունկցիաները իրականացնում էին Հայռևկոմի միջոցով։

1921 թվի ապրիլ ամսին Լենինի և Ստալինի կողմից՝ ՌԿ(բ)Պ Կենտկոմի որոշմամբ, Սովետական Հայաստան աշխատանքի է ուղարկվում ընկեր Ալ. Մյասնիկյանը։ 1921 թվի մայիս ամսին Հայռևկոմը վերակազմվում է Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի, որի նախագահ է նշանակվում Ալ. Մյասնիկյանը։ Ժողկոմսովետը Ալ. Մյասնիկյանի ղեկավարությամբ ծավալուն աշխատանք է ձեռնարկում պետական-վարչական ապարատի ամրացման և երկրի քայքայված տնտեսության վերականգնման համար։

Հայկական ՍՍՌ Առաջին Կոնստիտուցիան ընդունվեց Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելուց մեկ տարի երկու ամիս հետո՝ 1922 թ. փետրվարի 2-ին։

Հայաստանում սովետական կարգեր հաստատելուց անմիջապես հետո, կոնստիտուցիայի ընդունմանը նախորդել էին Հայռևկոմի և այնուհետև Ժողկոմսովետի հրապարակած մի շարք դեկրետներ, հրամաններ ու որոշումներ, որոնց մեջ իրենց արտահայտությունն են գտել պետական և սոցիալիստական շինարարության զանազան բնագավառներում Հայաստանի աշխատավորության ձեռք բերած հետևյալ հիմնական նվաճումները։

ա) Հայաստանում սովետական իշխանության ստեղծումը, դաշնակցական-բուրժուական պետական ապարատի ջախջախումը և սովետական պետության նոր ապարատի ստեղծումը, սկզբում (մինչև 1922 թ.) ամբողջ իշխանության կենտրոնացումը հանձին Ռևոլուցիոն կոմիտեների, այնուհետև հանձին ընտրովի սովետների՝ որպես պրոլետարիատի դիկտատուրայի օրգանների։

բ) Էքսպրոպրիատորների էքսպրոպրիացիան, արտադրության միջոցների և գործիքների ու հողի մասնավոր սեփականության վերացումը, Հայաստանի սովետական իշխանության կողմից ժողտնտեսության իշխող բարձունքների տիրումը և դեպի սոցիալիզմ առաջին քայլերի իրականացումը։

գ) Ազգային համերաշխության, ազգերի հավասարության և Հայաստանի աշխատավորների ամենադեմոկրատական իրավունքների ու ազատությունների հաստատումը։

դ) ՀՍՍՌ պետական շինարարության գծով կատարած աշխատանքները, որոնք առաջրնթաց քայլ հանդիսացան առաջին կոնստիտուցիայի ստեղծման համար։

Հայաստանի Ռևկոմի օրենսդրական առաջին ակտը, որը կոնստիտուցիոն կերպով ձևակերպեց իշխանության անցումը բանվոր դասակարգի ու աշխատավորության ձեռքը և սովետական պետության ստեղծումը, հանդիսացավ Հայռևկոմի 1920 թվի նոյեմբերի 29-ի «Դեկլարացիան՝ Հայաստանը Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկա հայտարարելու մասին»։

«Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ,— ասված է «Դեկլարացիայում»,— Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) պարտիան այսօրվանից Հայաստանը հայտարարում է Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկա։ Այսօրվանից Սովետական Հայաստանի կարմիր դրոշակը պաշտպանելու է նրա աշխատավոր ժողովրդին։ Ճնշող-

ների դարավոր լծից»։[1] Այնուհետև «Դեկլարացիայում» նկարագրվում է անսահման ծանր այն ժառանգությունը, որ մնացել է հավիտենապես անհետացող դաշնակցական կառավարությունից ազատագրված Հայաստանում։

Ցույց տալով ամբողջ ժողտնտեսության քայքայված ծանր դրությունը, որին հասցրել էին դաշնակները իրենց տխրալի տիրապետության շրջանում, «Դեկլարացիան» գրում էր. «Ներկա ծանր պայմաններում ու լուրջ բոպեին ընդունելով իշխանության ամբողջ պատասխանատվությունը, մենք (այսինքն Ռևկոմը— Հ. Ս.) Հայաստանի ժողովրդական ուժերին կոչ ենք անում մեզ աջակցել բանվորա-գյուղացիական իշխանության թշնամիների դեմ կռվելու և կանչում սովետական անդուլ, ստեղծագործական աշխատանքի»։[2]

Ընդգծելով պրոլետարիատի ինտերնացիոնալ խնդիրները և սովետական ժողովուրդների եղբայրական համագործակցությունը, «Դեկլարացիան» այնուհետև նշում էր. «Սովետական Ռուսաստանը այժմ ապստամբ ժողովրդի հրավերով հնարավորություն ունի եղբայրական օգնություն ցույց տալու նրան ու Հայաստանը Անտանտայի գործակալների— դաշնակցական կառավարությունից փրկելու», «Դեկլարացիան» հայտարարում էր, որ ՀՍՍՌ Ռևկոմը ապահովված է եղբայրական Սովետական Ադրբեջանի երաշխիքով և ռևոլուսիոն ողջույն էր ուղարկում Ադրբեջանի աշխատավոր ժողովրդին, Բաքվի պրոլետարիատին, իբրև Ենդրկովկասի Սոցիալիստական ռևոլուցիայի առաջատար ջոկատի։

Հայաստանի քայքայված ժողովրդական տնտեսությունը արագ կերպով վերականգնելու, միաժամանակ բուրժուազիայի և կալվածատերերի տնտեսական կախումից ու շահագործումից աշխատավորությանը ազատագրելու նպատակով «Դեկլարացիան» նշում էր, որ «Հայաստանի գյուղացիությունն իր ձեռքը կառնի ամբողջ հողը, որը պատկանում էր մելիքներին ու ինչպես և վանքապատկան ու եկեղեցապատկան ու մզկիթների սեփականություն համարվող հողերը։ Ժողովրդի ձեռքը կանցնեն անտառների հարստությունը, ջրերը, լճերն ու հանքերը՝ Հայաստանի աշխատավոր ազգաբնակչության կարիքները բավարարելու համար։ Նույն նպատակով Հայաստանի Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկայի սեփականություն կհայտարարվեն ավել կամ պակաս ծավալի գործարանները, որոնց ստեղծող բանվորները կտիրանան ազատ աշխատանքի»։[3]

Դաշնակցական կառավարությունն իր գոյության մոտ երեք տարվա ընթացքում միջազգային իմպերիալիստներից ստացել էր հսկայական նյութական օգնություն. նրա «արած պարտքերը պարտատեր պետություններին 1921 թ. հաշիվներով՝ կազմում էին 17,4 միլիոն դոլլար, որից պարտք ԱՄՆ-ին՝ 13,0 միլ. դոլլար, Անգլիային՝ 4,4 միլ. դոլլար, ընդամենը՝ 17,4 միլ. դոլլար»։[4] Սակայն դաշնակները երկրի և ժողովրդի համար ոչ մի շինարար աշխատանք չէին կատարել։ Այդ բոլոր գումարները սպառում և խժռում էին նրանց զորքը, կառավարությունը և նրա շուրջը խմբված մաուզերիստներն ու խմբապետները։ Հետևաբար Հայաստանի բանվորներն՝ու աշխատավոր գյուղացիները չէին կա-

---

[1] ՀՍՍՌ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1920—1921 թ.թ., հոդվ. 1-ին։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

[4] «Խորհրդային Հայաստան», 1920-1925 թ.թ. ժողովածու, Երևան, 1926 թ., էջ 31

րող պատասխանատու լինել երկիրն օտարերկրյա կապիտալից ստրկական կախման մեջ գնող պարտքերի համար, այդ պատճառով էլ «Դեկլարացիան» նշում էր. «Անհապաղ ի չիք կհայտարարվեն Հայաստանի բոլոր պետական պարտքերը Անտանտային (մասնավորապես Ամերիկային), պարտքեր, որ դաշնակցական կառավարությունը ուզում էր քամել Հայաստանի բանվորից և գյուղացուց»։

Հայոնկոմի այդ «Դեկլարացիան» ուներ պատմական նշանակություն։ Նրա մեջ շարադրված էին Հայաստանի սովետական իշխանության միջազգային, քաղաքական, տնտեսական գործունեության հիմնական սկզբունքները, լուսաբանվում էին Հայաստանի պատմական իրադրությունը, տնտեսական, քաղաքական դրությունը և երկրի ներքին ուժերի հարաբերությունը։ Միաժամանակ նա ուղի էր ցույց տալիս իշխանության հետագա քաղաքականության համար։ 1920 թ. նոյեմբերի 29-ի այդ «Դեկլարացիայով» սահմանված սկզբունքները հետագայում իրենց օրենսդրական ամրապնդումն ստացան Հայոնկոմի կողմից ընդունված մի շարք օրենսդրական ակտերում, որոնք հանդիսանում են կոնստիտուցիոն ակտեր։

* * *

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի հպթանակից անմիջապես հետո սովետական իշխանությունը ձեռնարկեց Կարմիր Բանակի ստեղծման գործին, արմատապես ոչնչացնելով հին բանակի ողջ սիստեմը։

Հայոնկոմը 1920 թվի դեկտեմբեր ամսի սկզբին կազմակերպեց Ռազմական գործերի ժողկոմատ, դեկտեմբերի 2-ին հրատարակվեց հրաման «Հայաստանի բանակի վերակազմության մասին»,- որի համաձայն բանակը կոչվում էր Սովետական Հայաստանի Կարմիր Բանակ. ոչնչացվում էին աստիճանները, զորամասերում մտցվում էր քաղաքական կոմիսարների ինստիտուտ, զորամասերի հրամանատարների հրամանները պետք է վավերացված լինեին քաղաքական կոմիսարի ստորագրությամբ և այլն։ Այնուհետև ռազմական գործերի ժողկոմի 1920 թվի դեկտեմբերի 12-ի հրամանով հիմնվեց ՀՍՍՌ Կարմիր Բանակի քաղաքական վարչությունն, որին և իրավունք վերապահվեց կատարել նշանակում՝ քաղաքական բոլոր կոմիսարների,[2] որոնք զորամասերում կազմակերպում և ղեկավարում էին քաղաքական-դաստիարակչական աշխատանքը։

Սակայն պետք է նշել, որ Ռևկոմը սկզբնական շրջանում բանակի վերակազմության, հին բանակի ոչնչացման և նոր ռևոլուցիոն բանակ ստեղծելու գործում չկարողացավ հանդես բերել անհրաժեշտ հետևողականություն ու զգոնություն։ Բանակի հրամանատարական կազմում որոշ ժամանակ շարունակեցին մնալ մի շարք թշնամական տարրեր։

Հայոնկոմի բանակի վերակազմության հարցում թույլ տված սխալները վերջնականապես վերացվեցին դաշնակների կազմակերպած 1921 թվի փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից հետո, երբ Հայաստանի Կարմիր Բա-

---

[1] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Գետհրատ, Էջմիածին, 1920 1921 թթ. հոդվ. 1-ին։

[2] Նույն տեղում, հոդվ. 2։

[3] Նույն տեղում, հոդվ. 10։

նակը ևս կազմակերպվեց ՌՍՖՍՌ հերոսական Կարմիր Բանակի նման, նրա տրադիցիաներով։

1917 թ. դեկտեմբերի 20-ին սովետական իշխանությունը Ռուսաստանում, ընկեր Լենինի և Ստալինի նախաձեռնությամբ ստեղծեց Համառուսական Արտակարգ Հանձնաժողով (ՎՉԿ) կոնտրռևոլուցիայի, սաբոտաժի ու սպեկուլացիայի դեմ պայքարելու նպատակով։

Համառուսական Արտակարգ Հանձնաժողովը, փորձառու ղեկավար ու չեկիստ՝ ընկեր Ֆ. Ձերժինսկու գլխավորությամբ կազմակերպեց արագ և անողոք պայքար՝ ընդդեմ դասակարգային թշնամիների։

Համառուսական Արտակարգ Հանձնաժողովի կազմակերպումը ցույց տվեց, թե ինչպես Լենինի-Ստալինի պարտիայի ղեկավարությամբ բանվորները ու գյուղացիները սովորեցին պաշտպանել սովետների իշխանությունը և ջախջախիչ հարվածներ հասցնել կոնտրռևոլուցիոն տարրերին։

ՀՍՍՌ Ռևկոմի 1920 թ. դեկտեմբերի 6-ի «Արտակարգ հանձնաժողով հիմնելու մասին»[1] դեկրետով՝ Սովետական Հայաստանում ևս կոնտրռևոլուցիայի, սաբոտաժի և սպեկուլացիայի դեմ պայքարելու, ինչպես նաև պետական անվտանգությունն ապահովելու նպատակով հիմնվեց Արտակարգ Հանձնաժողով (ՉԿ), որը գործում էր համաձայն ՌՍՖՍՌ ՎՉԿ-ի կանոնադրության և կառուցված էր նրա սկզբունքներով։

ՀՍՍՌ Ռևկոմը և Ներքգործժողկոմատը 1921 թ. հունվարի 21-ին հրաման հրապարակեցին. «Ռևոլուցիոն կարգ և հասարակական ապահովություն հաստատելու մասին»,- որով ՀՍՍՌ Ռևկոմը ՆԳԺԿ-ին իրավունք էր վերապահում Հայաստանի սահմաններից հեռացնելու ռևոլուցիոն կարգին և հասարակական ապահովությանը վտանգ սպառնացող անձանց, մաուզերիստներին ու այլոց, ըստորում, ինչպես նշված էր այդ հրամանում, հիշյալ անձանց բողոքը, այդ օրգանների իրենց նկատմամբ կայացրած որոշումների դեմ, չէր դադարեցնում այդ որոշումների իրագործումը։ Հետագա դեպքերը ցույց տվին, որ Արտակարգ Հանձնաժողովի կազմակերպումը միանգամայն ժամանակին էր, քանի որ կոնտրռևոլուցիոն դաշնակցականները դեռ իրենց զենքերը ցած չէին դրել։ Այդ ցույց տվեց նրանց 1921 թ. փետրվարյան ավանտյուրան։

ՀՍՍՌ Ռևկոմը Երևան մտնելուց անմիջապես հետո դիվանագիտական հարաբերություններ է հաստատում ՌՍՖՍՌ-ի և Սովետական Ադրբեջանի հետ 1920 թ. դեկտեմբերի 6-ի՝ «Նախկին կառավարության դիվանագիտական ներկայացուցչությունների և միսիաների վերացման մասին»[3] հրամանով։ 1920 թ. նոյեմբերի 29-ից վերացված է համարում տապալված դաշնակցական կոնտրռևոլուցիոն «կառավարության» արտասահմանում գտնված բոլոր դիվանագիտական ներկայացուցչություններն ու միսիաները, որոնք միջնորդների և գործակալների դեր էին խաղում Անտանտայի երկրների կողմից հայ ժողովրդին ստրկացնելու գործում։

Այդ հրամանում ասված էր. «Բոլոր դիպլոմատիկական ներկայացուցչություններն ու արտասահմանյան միսիաները, հիմնված դաշնակների նախկին

---

[1] Դեկրետների և հրամանների ժողովածու. պրակ 1-ին. Գնոհրատ. Էջմիածին. 1920 1921 թ.թ. հոդվ. 8։

[2] Նույն տեղում, հոդվ. 110։

[3] Այդ ժամանակ իրավաբանական խիստ սահմանագծում չէր դրվում դեկրետ, օրենք, որոշում, հրաման հասկացողությունների միջև։

կառավարության օրով, սակայն. Նոյեմբերի 29-ից, Հայաստանը անկախ Սոցիալիստական Ռեսպուբլիկա հռչակվելու մոմենտից կորցնում են իրենց լիազորությունները»։[1]

ՀՍՍՌ Ռևկոմի մյուս կարևոր գործը եղավ կազմակերպել տեղական իշխանության օրգաններ, սակայն այդ պարտականությունը Ռևկոմը գրեց իր կողմից կազմակերպվող Ներքին Գործերի Ժողկոմատի վրա, որը և մինչև ՀՍՍՌ Կոնստիտուցիայի ընդունումը հանդիսացավ ՀՍՍՌ բարձրագույն վարչական մարմինը։

ՆԳԺ Կոմիսարիատին հանձնարարվել էր տեղերում կազմակերպել և ղեկավարել իշխանության օրգաններ, այն է՝ հիմնել տեղական Ռևկոմներ, որոնց անդամներին նշանակում էր ինքը ՆԳԺ Կոմիսարիատը։ Այսպիսով, երկրի վարչական կառավարման տեսակետից ստորադասման կարգով ՆԳԺ Կոմիսարիատին էին ենթարկվում Հայաստանի բոլոր տեղական, գավառական և քաղաքային ռևկոմները։ Այդ սկզբունքները ամփոփվում էին Ռևկոմի 1920 թվի դեկտեմբերի 14-ի «Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի իրավասության մասին» դեկրետում,[2] որի մեջ ասված է. «Մինչև ՀՍՍՌ Կոնստիտուցիայի մշակումը՝ հաստատել հետևյալ կանոնները ՆԳԺԿ-ի իրավասության վերաբերյալ

1 ՆԳԺԿ-ը հանդիսանում է ՀՍՍՌ բարձրագույն վարչական մարմինը, որի միջոցով Հայռևկոմը կառավարում է երկիրը։

2) ՆԳԺԿ-ի պարտականություններն են՝ ա) իշխանության կազմակերպումը տեղերում, բ) երկրի ամբողջ վարչական կազմի կենտրոնացումը, գ) բոլոր տեղական վարչական հաստատությունների վրա վարչական հսկողությունը։

3) Երկրի վարչական կառավարման գործում՝ ՆԳԺԿ-ին են ենթարկվում Հայկական ՍՍՌ բոլոր տեղական, գավառական և քաղաքային Ռևկոմները (նույնպես և Երևան քաղաքում)։

4) Այսուհետև Ռևկոմների երկրի ներքին վարչակարգի վերաբերյալ հրատարակելիք բոլոր հրամաններն ու որոշումները, բացի նրանցից, որոնք բխում են կենտրոնական իշխանության հրամաններից, պիտի հաստատվեն ՆԳԺԿ-ի կողմից։

5) Մինչև ՀՍՍՌ Սովետների ընտրությունները՝ ՆԳԺԿ-ը Հայաստանի Ռևկոմի համաձայնությամբ իրավունք ունի հեռացնել և նշանակել տեղական Ռևկոմների բոլոր անդամներին»։[3]

ՆԳԺ Կոմիսարիատը մեծ աշխատանքներ կատարեց նոր, Սովետական վարչական ապարատի կազմակերպման, ղեկավարման և ամրապնդման ուղղությամբ։ 1920 թվի դեկտեմբերի 13-ին հրապարակվում է ՆԳԺ Կոմիսարիատի հրամանը՝ «Հին վարչական հիմնարկությունների և պաշտոնյաների լիկվի-

---

[1] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1920—1921 թթ., հոդվ. 4 (ոճը պահպանված է նույնությամբ)։

[2] Պետք է նշել, որ այդ դեկրետը փաստորեն ընդունվել է դեկտեմբերի 13-ին, սակայն դեկր. և հրամանների ժողովածուում նշվել է դեկտեմբերի 14-ին, այսինքն հրատարակվելու օրը։

[3] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1920—1921 թթ. հոդվ. 7 (ոճը պահպանված է նույնությամբ)։

դացիայի մասին»։[1] ՆԳԺ Կոմիսարիատը, օժտված ՀՍՍՌ Ռևկոմի կողմից իրեն հանձնարարված բարձրագույն վարչական մարմնի իրավասությամբ, իր այդ հրամանով ամբողջությամբ վերացնում է հին վարչա-կառավարչական օրգանները և արձակում պաշտոնյաներին։ Այսպես՝ նահանգապետությունները, քաղաքային ինքնավարությունները, գավառական կոմիսարները, նախկին ներքին գործոց նախարարության արտակարգ լիազորները, միլիցիայի տեսուչները, նահանգական ատյանները և մյուս բոլոր օրգանները, նրանց գրասենյակներով ու շտատներով, նրանց փոխարեն կազմակերպելով տեղական Ռևկոմներ։

Պետական իշխանության օրգանների սիստեմում հստակ և կարևոր տեղ է գրավում դատարանը։

Սովետական դատարանն ու դատախազությունը հանդիսանում են պրոլետարիատի դիկտատուրայի հզոր և գործոն լծակները, որոնց օգնությամբ նա ամրապնդում է սոցիալիստական հասարակարգը։

Ընկեր Լենինը՝ «Սովետական իշխանության հերթական խնդիրները» հոդվածի նախնական ուրվագծի մեջ գրել է. «Կապիտալիստական հասարակության մեջ դատարանը գերազանցապես ճնշման ապարատ, բուրժուական շահագործման ապարատ է եղել»,[2] իսկ 1918 թվի հունվարին Համառուսական Սովետների 3-րդ համագումարում ԺողկոմսովետԻ գործունեության մասին տված զեկուցման մեջ Լենինը բուրժուական դատարանի մասին ասել է, որ նա «...ներկայացնում էր կարգուկանոնի պաշտպանություն, իսկ իրապես շահագործվողների անողոք ճնշման կույր, նուրբ գործիք էր, որ պաշտպանում էր փողի պարկի շահերը»։[3] Ահա թե ինչու Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայից անմիջապես հետո ընկեր Լենինի և Ստալինի անմիջական ղեկավարությամբ արմատապես ոչնչացվեց հին բուրժուական դատական սիստեմը և ստեղծվեց նոր՝ սովետական արդարադատության սիստեմը, հանձին նոր՝ ժողովրդական դատարանի։ «Թո՛ղ աղաղակեն,— ասում էր ընկեր Լենինը,— թե մենք առանց հին դատարանը բարեփոխելու՝ միանգամից այն ջարդուփշուր արվելու հանձնեցինք։ Մենք դրանով ճանապարհ մաքրեցինք իսկական ժողովրդական դատարանի համար...»։[4]

ՀՍՍՌ Ռևկոմը ելնելով Սովետական Ռուսաստանի փորձից, կազմակերպեց Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատ, որի 1920 թվի դեկտեմբերի 18-ի՝ «Հին դատարանների լուծման մասին» և դեկտեմբերի 22-ի՝ «Ժողովրդական դատարանների մասին»[5] հրամաններով վերացվեցին դաշնակների բոլոր դատական հիմնարկությունները և ստեղծվեց միասնական ժողովրդական դատարան։

Արդժողկոմատի 1920 թվի դեկտեմբերի 22-ի հրամանում ասված է, որ «Հոդ. 3. Ժողովրդական դատավոր և ատենակալ կարող են լինել միայն աշ-

---

[1] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին. Պետհրատ. Լենինգրադ, 1920—1921 թ.թ., հոդվ. 11։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 22, էջ 550։

[3] Նույն տեղում, էջ 265։

[4] Նույն տեղում։

[5] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին. Պետհրատ. Լենինգրադ, 1920—1921 թ.թ., հոդվ. 30 և 43։

խատավորները և ոչ երբեք շահագործողները։ Հոդ. 4. Ժողովրդական դատավորի թեկնածուն ընդունակ է լինելու արտահայտիչ հանդիսանալ ու գործադրել Սոցիալիստական Սովետական Իշխանության գաղափարները»[1]

Հայաստանում դաշնակների տիրապետության օրերին գոյություն ուներ նույն դատարանական սիստեմը, ինչ որ ցարիզմի ժամանակ։

Մայիսյան ապստամբության ճնշումից հետո, դաշնակների կառավարությունը 1920 թ. մայիսի 15-ին ընդունած որոշումով[2] ստեղծեց արտակարգ դատարաններ Երևանում, Ալեքսանդրապոլում (Լենինական), Նոր Բայազետում և Զանգեզուրում, որպեսզի դատի այդ ապստամբությանը մասնակցած կոմունիստներին, բանվորներին և գյուղացիներին։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Արտակարգ դատարաններում իբրև դատավորներ հանդես էին գալիս դաշնակ արյունարբու խմբապետները, որոնք արյունալի դատաստան էին տեսնում հայ ժողովրդի լավագույն զավակների հետ։

Ոչնչացնելով դաշնակների դատական ապարատը և նրա փոխարեն ստեղծելով ժողովրդական դատարաններ, ՀՍՍՌ Ռևկոմը ՌՍՖՍՌ-ի փորձով կազմակերպեց Ռևոլուցիոն տրիբունալներ։ Հոկտեմբերյան Մեծ ռևոլուցիայից անմիջապես հետո ՌՍՖՍՌ-ում 1917 թ. նոյեմբերի 24-ին (դեկտեմբերի 7-ին) հրատարակվել էր Ժողկոմսովետի պատմական № 1 դեկրետը՝ դատարանի մասին։ Այդ դեկրետով հիմքից ոչնչացվել էր ցարական իշխանության դատական ողջ սիստեմը և նրան փոխարինել էին դեմոկրատական ընտրությունների հիման վրա կազմակերպվող դատարանները. միաժամանակ դեկրետի 8-րդ հոդվածի համաձայն կազմակերպվել էին բանվորների և գյուղացիների ռևոլուցիոն տրիբունալներ՝ պայքարելու համար կոնտրռևոլուցիոն ուժերի դեմ և բռնելու սաբոտաժի, սպեկուլացիայի, հափշտակումների և այլ վտանգավոր հանցագործություններին վերաբերյալ գործերը։ Նույն նպատակով և սկզբունքով ՀՍՍՌ Ռևկոմի 1920 թվի դեկտեմբերի 19-ի հրամանով Հայաստանում կազմվեց Ռևոլուցիոն տրիբունալ։ ՀՍՍՌ Ռևկոմի և Արդժողկոմի 1921 թվի հունվարի 15-ի «Գերագույն ռևոլուցիոն և ռևոլուցիոն տրիբունալի մասին» դեկրետով[3] ՀՍՍՌ Ռևկոմին կից կազմակերպվեց Գերագույն ռևոլուցիոն տրիբունալ, իսկ Արդժողկոմատին կից՝ Ռևոլուցիոն տրիբունալ։

Գերագույն ռևոլուցիոն տրիբունալի դատավճիռները վերջնական էին և գործադրվում էին 48 ժամվա ընթացքում, բացի մահվան պատժին վերաբերյալ (գնդակահարության) դատավճիռներից, որոնք պետք է հաստատվեին ՀՍՍՌ Ռևկոմի կողմից։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան Ռուսաստանում հիմնովին ոչնչացրել էր նախառևոլուցիոն ցարական, բուրժուական-կալվածատիրական օրենսդրությունը։ Նույնը կատարեց նաև ՀՍՍՌ Ռևկոմը իր 1920 թվի

[1] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1920-1921 թ.թ. հոդվ. 43 (ոճը պահպանված է նույնությամբ)։

[2] Այդ որոշումը հրատարակելիս այն թվագրված էր 1920 թ. մայիսի 8, սակայն հետագայում պարզվեց, որ դաշնակցական կառավարության նախարարների խորհուրդը այդ որոշումն ընդունել է 1920 թ. մայիսի 15-ին, այսինքն ապստամբությունը ճնշելու հաջորդ օրը, այսպիսով կատարելով բռդահայտ կեղծիք։

[3] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1920-1921 թ.թ., հոդվ. 96։

դեկտեմբերի 21-ի դեկրետով՝ «Հավաք-Որինաց»-ի վերացման և ՌՍՖՍՌ դեկրետների պարտադրականության մասին»[1]

Այդ դեկրետը, ոչնչացնելով դաշնակցական Հայաստանի բուրժուական կալվածատիրական օրենսդրությունը և ՀՍՍՌ-ում իբրև գործող օրենքներ ընդունելով ՌՍՖՍՌ-ի օրենքները, դրանով ցույց տվեց Սովետական Ռեսպուբլիկաների քաղաքական ու տնտեսական խնդիրների միասնությունը։ Ցույց տվեց նաև այն, որ սովետական ռեսպուբլիկաների աշխատավորների խնդիրների և նպատակների մեջ գոյություն ունի սերտ կապ, հետևաբար օրինականությունը «պետք է լինի միասնական համառուսական և նույնիսկ միասնական՝ Սովետական Ռեսպուբլիկաների ամբողջ ֆեդերացիայի համար»։[2]

1917 թվի նոյեմբերի 10 (21)-ին հրատարակվեց համառուսական Կենտգործկոմի դեկրետը՝ «Դասերի ու քաղաքացիական աստիճանների ոչնչացման մասին», որը ոչնչացնելով մինչ այդ Ռուսաստանում գոյություն ունեցող դասերը, դասային բաժանումները, կազմակերպությունները, դասային արտոնություններն ու սահմանափակումները, քաղաքացիական բոլոր աստիճաններն ու կոչումները, սահմանում էր Ռուսաստանի ողջ ազգաբնակչության համար ընդհանուր անվանում՝ Ռուսաստանի Ռեսպուբլիկայի քաղաքացի։

Հայկական ՍՍՌ ՆԳԺ Կոմիսարիատի 1921 թվի հունվարի 21-ի՝ «Դասերի և քաղաքացիական աստիճանների վերացման մասին» հրամանով՝ վերացվեցին Հայաստանում մինչ այդ գոյություն ունեցող դասերը, դասային հիմնարկները, դասային արտոնություններն ու սահմանափակումները, ինչպես նաև քաղաքացիական բոլոր աստիճանները, ամեն տեսակի կոչումներն ու տիտղոսները և սահմանվեց Հայաստանի ամբողջ ազգաբնակչության համար մի ընդհանուր կոչում՝ Հայաստանի Ռեսպուբլիկայի քաղաքացի։

Այդ հրամանի 3-րդ հոդվածի համաձայն վերացված դասերի և նրանց հիմնարկությունների գույքը, ինչպես նաև գործերը, գործավարությունը և այլն անցնում էին համապատասխան ռևկոմների տնօրինությանը։

1921 թ. հուլիսի 20-ին ՀՍՍՌ ժողկոմսովետը դեկրետ ընդունեց՝ «Գյուղական, գավառակային և գավառային ռևտլուցիոն կոմիտեների կազմակերպման մասին»։[4] Այդ դեկրետով նախորոշվում էին ռևկոմների նպատակները, այնուհետև կազմակերպման կարգը և նրանց խնդիրները՝ իրավասությունը։ Տեղական ռևկոմները համարվում էին իշխանության նշանակովի և ժամանակավոր օրգաններ, որովհետև նրանք կազմակերպվում էին մինչև ՀՍՍՌ կոնստիտուցիայի ընդունումը, որից հետո նրանց փոխարինելու էին գալու աշխատավորների դեպուտատների սովետները և նրանց գործկոմները։ Ըստ հիշյալ դեկրետի 2-րդ հոդվածի, ռևկոմների նպատակն էր.

«ա. Սովետական իշխանության ամրապնդումը տեղերում. բ. Սովետների և Սովետների համագումարների ընտրությունների նախապատրաստությունը.

---

1 Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1920—1921 թ.թ. հոդվ. 39 (ոչ պակաս պահպանված է նույնությամբ)։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 27, էջ 400 (հայերեն)։

3 Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1920—1921 թ.թ., հոդվ. 111։

4 Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 2-րդ, Պետհրատ, Էջմիածին, 1920—1921 թ., հոդ. 73։

գ) երկրի կառավարելը, մինչև որ կկազմակերպվեն ընտրովի սովետական մարմինները»։

Ռևկոմները լինում էին գյուղական, գավառակային և գավառային։

ՀՍՍՌ Ժողկոմսովետը այսպիսով իր 1921 թվի հուլիսի 20-ի դեկրետով օրենսդրական ամրապնդում տվեց ապստամբության բոցերի մեջ ստեղծված իշխանության նոր օրգանների՝ տեղական ռևկոմների կազմակերպմանը և նշեց նրանց իրավասության խնդիրները սովետական իշխանությունը տեղերում ամրապնդելու համար։

Սրանք էին օրենսդրական այն հիմնական ակտերը, որոնց միջոցով Սովետական իշխանությունը ոչնչացրեց դաշնակների կառավարության պետական հին ապարատը և ստեղծեց Սովետական պետության՝ պրոլետարիատի դիկտատուրայի նոր պետական օրգանները։

1921 թվի փետրվարի կեսերին, ժողովրդի թշնամի դաշնակները, մյուս կոնտրռևոլուցիոն պարտիաների հետ գործակցած ավանտյուրիստական զինված ելույթ սկսեցին սովետական իշխանության դեմ։

Մեկ և կես ամիս տևող ծանր քաղաքացիական կռիվներից հետո, ապրիլի 2-ին ՀՍՍՌ Ռևկոմին հաջողվում է ոչնչացնել դաշնակների ավանտյուրան, Սովետական Ադրբեջանից Կարմիր Բանակի լրացուցիչ ուժեր ստանալու և Հայաստանի բանվորներին ու աշխատավորությանը պայքարի հանելու միջոցով, բացառությամբ Զանգեզուրի, որը դաշնակների ձեռքում մնաց մինչև 1921 թվի հուլիսի սկիզբը։

ՀՍՍՌ Ռևկոմը 1921 թվի ապրիլի 3-ին հրապարակեց հրաման «Կոնտրռևոլուցիոն իշխանության տապալման մասին»։ Այդ հրամանում ասված էր.

«Տապալելով Երևանի կոնտրռևոլուցիոն կառավարությունը՝, այսպես կոչված «Հայրենիքի փրկության կոմիտեն» և վերականգնելով Հայաստանի բանվորա-գյուղացիական Սովետական իշխանությունը Ռեսպուբլիկայի լիակատար սահմաններում՝ ՀՍՍՌ Ռազմա-ռևոլուցիոն կոմիտեն հրամայում է.

1. ՀՍՍ Ռեսպուբլիկայի հրապարակած բոլոր դեկրետներն ու հրամանները պահպանում են իրենց ուժը ռեսպուբլիկայի ամբողջ տերիտորիայի վրա։

2. Տապալված կոնտրռևոլուցիոն կառավարության բոլոր հրամաններն ու կարգադրություններն ան ոչինչ համարել»։[1]

* * *

Խոշորագույն նշանակություն ունեցան նաև ՀՍՍՌ Ռևկոմի այն օրենսդրական ակտերը, որոնց միջոցով իրականացվում էր էքսպրոպրիատորների էքսպրոպրիացիան, որը սովետական իշխանության կողմից ժողովրդական տնտեսության իշխող բարձունքների գրավման և ամրացման քաղաքականությունն էր։

Ընկեր Ստալինը գրում է, որ «Բուրժուական ռևոլուցիան ավարտվում է սովորաբար իշխանության գրավումով, մինչդեռ պրոլետարական ռևոլուցիայի համար իշխանության գրավումը լոկ նրա սկիզբն է, ըստ որում իշխանությունն օգտագործվում է որպես լծակ՝ հին էկոնոմիկայի վերակառուցման և նորի կազմակերպման համար»։[1]

---

[1] «Խորհրդային Հայաստան», 1920—1925 թ.թ. ժողովածու, Երևան, 1926 թ., էջ 22։

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 8, էջ 28։

Հայաստանում Սովետական կարգեր հաստատելուց հետո դեպի սոցիալիզմն առաջին քայլերի իրականացումն ու ժողովրդական տնտեսության կազմակերպման ու ղեկավարման հարցերն իրենց արտահայտությունը գտան, ինչպես ՀՍՍՌ Ռևկոմի 1920 թվի նոյեմբերի 29-ի «Դեկլարացիայում», նույնպես և ՀՍՍՌ Ռևկոմի և այնուհետև Ժողկոմսովետի հրապարակած մի շարք պատմական դեկրետներում և հրամաններում։

ՀՍՍՌ Ռևկոմը 1929 թվի դեկտեմբերի 10-ին դեկրետ հրապարակեց՝ «Դրամատների ազգայնացման մասին», որի մեջ ասված էր. «Ժողովրդական տնտեսությունը կանոնավոր կազմակերպելու, բանկային շահատակությունն արմատախիլ անելու և համայն բանվորության, գյուղացիության և բանկային կապիտալի շահագործումից տուժող աշխատավորության ազատագրման համար և ՀՍՍՌ Ռեսպուբլիկայի ժողովրդին ու շքավոր դասին իսկապես ծառայող միացյալ պետական բանկ ստեղծելու նպատակով, Հայաստանի Ռևկոմը որոշեց՝

1. Բանկային գործը հայտարարվում է պետական մենաշնորհ, ՀՍՍՌ տերիտորիայի վրա գոյություն ունեցող Ռուսաստանի Պետական բանկը, մասնավոր՝ առևտրական բանկերի վարչություններն ու բաժանմունքները, փոխադարձ վարկի ընկերությունը, միացվում են Հայաստանի Պետական բանկի հետ։

2. Լիկվիդացիայի ենթարկվող ձեռնարկությունների ակտիվն ու պասիվը ընդունում է Պետական բանկը»։[2]

Հսկայական նշանակություն ունեցող հարց էր նաև ագրարային հարցը, մանավանդ ցարական Ռուսաստանի գերազանցապես գյուղացիական նման մի երկրի համար։

Վ. Ի. Լենինը բնորոշելով ցարական Ռուսաստանի հողատիրությունը, գրում էր.

«Տաս միլիոն գյուղացիական ծխերն ունեն 73 միլիոն դեսյատին հող։ Քսանութ հազար ազնվազարմ ու կոռ լենդ լորդերը՝ 62 միլիոն դեսյատինա։ Այսպիսով մեկ կալվածատեր միջին հաշվով ուներ այնքան հող, որքան 30՝ գյուղացիական տնտեսություն միասին վերցրած։

Ընկեր Ստալինը խոսելով գյուղացիական հարցի մասին ասում է, որ այդ հարցը «... Պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր հարցի մի մասն է և, որպես այդպիսին, լենինիզմի ամենահրատապ հարցերից մեկն է»։[4] Այդ պատճառով էլ, այդ հարցի վերջնական լուծումը կատարվեց միմիայն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի հաղթանակի հետևանքով։

Հայաստանի համար ագրարային հարցը առավել մեծ նշանակություն ուներ, որովհետև ցարիզմի ժամանակ գոյություն ունեցող հողօգտագործման կարգն ու հողային հարաբերությունները գաշնակների տիրապետության ընթացքում ոչ միայն մնացին միանգամայն անձեռնմխելի, այլև նրանց վարած բարբարոսական քաղաքականության հետևանքով Հայաստանի գյուղատնտեսությունը հասավ իր քայքայման գագաթնակետին։

---

[2] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին. Պետհրատ. Էջմիածին. 1920 - 1921 թթ., հոդվ. 8։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 13, էջ 280։

[4] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 6, էջ 143։

Հայաստանը Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա հայտարարելու մասին Ռևկոմի «Դեկլարացիայում» գրված էր. «Հայաստանի գյուղացիությունը իր ձեռքը կառնի ամբողջ հողը, որ պատկանում էր մելիքներին ու ինչպես և վանքապատկան, եկեղեցապատկան ու մզկիթների սեփականություն համարվող հողերը։ Ժողովրդի ձեռքը կանցնեն անտառների հարստությունը, ջրերը, լճերն ու հանքերը— Հայաստանի աշխատավոր ազգաբնակության կարիքները բավարարելու համար»։[1]

Վերոհիշյալի հիման վրա Սովետական Հայաստանում հողի ազգայնացումը կատարվեց ՀՍՍՌ Ռևկոմի 1920 թ. դեկտեմբերի 28-ի՝ «Հողերի պետականացման մասին» դեկրետով,[2] որի մեջ ասվում էր, որ ամբողջ հողը հանդիսանում է համաժողովրդական սեփականություն, կազմում է միասնական պետական ֆոնդ և գտնվում է գյուղատնտեսական կոմիսարիատի տրամադրության տակ։ Դեկրետում ասված է. «1. Բանվորագյուղացիական ազգաբնակության հողազուրկ և սակավահող մասը հողաբաժիններով ապահովելու և գյուղատնտեսությամբ զբաղվել ցանկացողներին հողեր բաշխելու նպատակով, այլև ռեսպուբլիկայի բոլոր կարիքները բավարարելու համար, արքունական, նադելի, եկեղեցական, վանքային, վակուֆային, մեչետային, իրավաբանական անձերի և մասնավոր հողերը դառնում են Հայաստանի Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկայի սեփականություն»։ Այնուհետև 2-րդ և 3-րդ կետերում ասվում է, որ նշված հողերն անցնում են գյուղատնտեսական կոմիսարիատի տրամադրության տակ, որը պարտավոր է կատարել «բոլոր հողերի կանոնավոր բաշխումը»։

Բոլոր հողերը դարձնելով պետական սեփականություն, դրանով իսկ վերանում է հողի մասնավոր սեփականությունը։

«Հողի պետականացման մասին» դեկրետը միանգամից լուծում էր տալիս հայ գյուղացիության՝ հողի համար մղած դարավոր պայքարին և հողը հատկացնում աշխատավոր գյուղացիներին։

Այդ դեկրետից հետո, հրապարակվեցին նաև անտառների, հողի ընդերքի և ջրերի ազգայնացման մասին դեկրետները։ Այսպես, 1921 թվի հունվարի 10-ին ՀՍՍՌ Ռևկոմը ընդունեց հրաման «Անտառների պետականացման մասին»։

«Անտառների պետականացման մասին» հրամանից մեկ օր հետո, այսինքն՝ 1921 թվի հունվարի 11-ին հրապարակվում է ՀՍՍՌ Ռևկոմի հրամանը, որով «ՀՍՍՌ բոլոր հողերի օգտակար հանածոները, հանքային ջրերը, հանքային ցեխերը, աղի և դառնալի լճերը, հայտարարվում են ազգայնացված և ռեսպուբլիկայի սեփականություն են դառնում»։[3] Վերոհիշյալ բոլորը հանձնվում է գյուղատնտեսության ժողկոմատի իրավասությանը։

Հայկական ՍՍՌ Ռևկոմի 1921 թվի հունվարի 31-ի՝ «Հայաստանի սահմաններում գտնվող ջրերի պետականացման մասին» դեկրետով «ՀՍՍՌ սահմաններում գտնվող բոլոր ջրերը, այսինքն՝ գետերը, լճերը, լճակները, հահիճները, աղբյուրները, քեահրիզները և ջրանցքները, նույնպես և ոռոգման

---

[1] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Լենինգրադ, 1920—1921 թ.թ., հոդվ 1։

[2] Նույն տեղում, հոդվ. 50։

[3] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Լենինգրադ, 1920—1921 թ. թ., հոդվ. 89։

ամբողջ սիստեմը և ջրաղացների առուներն ու այլ նմանօրինակ կառույցվածքները իրենց բոլոր արվեստական սարքով դառնում են պետական սեփականություն, առանց որևէ հատուցման»։[1] Դեկրետը գյուղատնտեսության ժողկոմատին պարտադրում է մշակել ջրօգտագործման նոր կանոններ։

Հայաստանում չքավոր ու միջակ գյուղացիները, ջրօգտագործման բնագավառում, անցյալում քիչ չեն տուժել կալվածատերերի, կուլակների, չինովնիկների անզուսպ կամայականություններից։ Որովհետև նախառևոլուցիոն Հայաստանում ջրօգտագործման իրավունքը կապված էր հողօգտագործման իրավունքի հետ և բխում էր նրանից, հետևաբար չքավոր գյուղացիների հողի համար մղած դարավոր պայքարը միևնույն ժամանակ նշանակում էր պայքար ջրի համար։

Ջրերի պետականացումով և ջրաբաշխման ֆունկցիաները պրոլետարական պետության օրգաններում կենտրոնացնելով, միանգամ ընդմիշտ վերջ տրվեց այդ հարցում ևս ամեն կարգի կամայականություններին։ ՀՍՍՌ ժողկոմսովետի 1921 թվի հունիսի 8-ի դեկրետով՝ պետականացվեց նաև Երևան քաղաքի ջրմուղը։

Պատմության մեջ պրոլետարական պետությունը միակն է, որ ունի տնտեսական-կազմակերպչական և կուլտուրական-դաստիարակչական աշխատանքի ֆունկցիա, որովհետև նրա հիմնական խնդիրներից է նոր սոցիալիստական էկոնոմիկայի ստեղծումը՝ հիմնված հանրային սոցիալիստական սեփականության վրա, մի հարց, որի լուծումը այնքան էլ ճնշտ չէր։ Այդ պատճառով էլ սովետական իշխանությունը Ռուսաստանում իր հաղթանակի առաջին օրվանից ձեռնարկեց երկրի արտադրության և ժողովրդական տնտեսության կազմակերպման հարցերին։ 1917 թ. նոյեմբերի 27 (14)-ին Համառուսական Կենտգործկոմը ընդունեց Վ. Ի. Լենինի կողմից կազմված կանոնադրությունը բանվորական վերահսկողության մասին, որի համաձայն, ժողովրդական տնտեսությունը պլանաչափորեն կարգավորելու շահերից ելնելով, բոլոր արդյունաբերական, առևտրական, բանկային, գյուղատնտեսական, տրանսպորտային, կոոպերատիվ, արտադրական ընկերություններում և այլ ձեռնարկություններում մտցվում էր բանվորական վերահսկողություն՝ մթերքների և հում նյութերի արտադրության, գնման, վաճառահանման, դրանք պահելու, ինչպես և ձեռնարկության ֆինանսական կողմի վրա։

Պետք է նշել, որ բանվորական վերահսկողության վերաբերյալ կանոնադրությունը հանդիսացավ սովետական իշխանության առաջին քայլը, արտադրության կառավարմանը անցնելու ուղղությամբ, որովհետև մինչև արտադրության հիմնական միջոցների՝ գործարանների և ֆաբրիկաների ազգայնացումը, բանվորական հսկողության միջոցով սովետական իշխանությունը պատրաստեց արտադրության կազմակերպման սաբոտաժի դեմ և արտադրության կազմակերպումը ենթարկեց բանվոր դասակարգի ու սովետական իշխանության շահերին։

1917 թվի դեկտեմբերի 14 (1)-ին հրատարակվեց Համառուսական Կենտգործկոմի դեկրետը՝ «Ժողովրդական տնտեսության գերագույն խորհրդի մասին»։ Այդ դեկրետով Ժողկոմսովետին կից ստեղծվող ԺՏԳԽ-ն իրեն նաատան

[1] Նույն տեղում, հոդվ. 127։

էր դնում՝ ժողովրդական տնտեսության և պետական ֆինանսների կազմակերպումը։

Դեկրետի 3-րդ հոդվածի համաձայն ԺՏԳԽ-ին վերապահվում էր կոնֆիսկացիայի, ռեկվիզիցիայի, արդյունաբերական և առևտրի զանազան ճյուղերի հարկադիր սինդիկացման իրավունքը և այլ ձեռնարկումներ արտադրության բաշխման և պետական ֆինանսների կարգավորման բնագավառում։ Այսպիսով, այդ դեկրետի հրապարակումով վճռական հարված հասցրվեց դարբիկների ու գործարանների կապիտալիստական սեփականությանը։ Լենինը բացառիկ նշանակություն էր տալիս ԺՏԳ Խորհուրդ կազմակերպելու վերաբերյալ դեկրետին։

«Բանվորական վերահսկողությունից,— գրում էր Լենինը,— մենք գնում էինք դեպի Ժողտնտխորհրդի ստեղծումը։

Միայն այդ միջոցը, բանկերի ու երկաթուղիների ազգայնացման հետ մեկտեղ, որ կիրառվելու է մերձավորագույն օրերում, հնարավորություն կտա մեզ՝ ձեռնարկելու նոր սոցիալիստական տնտեսության կառուցմանը»։[1]

Նույն նկատառումներով, Հայաստանի վերին աստիճանի քայքայված ժողովրդական տնտեսության կազմակերպման և վերականգնման համար, ՀՍՍՌ Ռևկոմը 1921 թվի հունվարի 21-ին ընդունեց դեկրետ՝ «Ժողովրդական տնտեսության խորհուրդ կազմակերպելու մասին»։

Այդ դեկրետում ասված է. «1. ՀՍՍՌ Ռևկոմին կից հիմնվում է Հայաստանի Ժողտնտեսության խորհուրդ։

2. Ժողտնտխորհուրդը պիտի կանոնավորի ժողովրդի տնտեսությունն ու պետական ֆինանսները։ Այս նպատակով ժողտնտեսության խորհուրդը մշակում է երկրի տնտեսության կարգավորման ընդհանուր ծրագիրն ու նորմաները և համաձայնեցնում ու միացնում է կենտրոնական ու տեղական տնտեսական հիմնարկությունների գործունեությունը։

3. Ժողովրդական տնտեսության խորհրդին իրավունք է տրվում գործող օրենքների սահմաններում կոնֆիսկացիա, բռնագրավում, սեկվեստր, արդյունաբերության և առևտրի զանազան ճյուղերի ստիպողական համաձայնեցում և արտադրության, բաշխման ու պետական ֆինանսների շրջանում այլ միջոցներ գործադրել։

4. Տնտեսությունը կարգավորող բոլոր գոյություն ունեցող հիմնարկությունները ենթարկվում են Ժողտնտեսության խորհրդին, որին իրավունք է տրվում փոփոխության ենթարկել նրանց»։[2]

Հայաստանում քարուքանդ եղած կապը վերականգնելու և կապի միջոցները պետության ձեռքում կենտրոնացնելու նպատակով ՀՍՍՌ Ռևկոմի 1920 թվի դեկտեմբերի 31-ի դեկրետով[3] ՀՍՍՌ-ի սեփականություն հայտարարվեցին Սովետական Հայաստանի տերիտորիայում գտնվող բոլոր հեռագրալարերը, որոնց օգտագործումը, ինչպես նաև հետագա խնամքը հանձնվեց փոստ-հեռագրական Ժողկոմատին։

ՀՍՍՌ Ժողկոմսովետի 1921 թվի օգոստոսի 24-ի՝ «Հեռախոսային և հե-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 22, էջ 270։

[2] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1920—1921 թ.թ. հոդվ. 109։

[3] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1920—1921 թ.թ. հոդ. 62։

ագրարան գույքի պետականացման մասին» դեկրետով[1] պետական սեփականության հայտարարվեց ՀՍՍՌ տերիտորիայում գտնվող հեռախոսային և հեռագրական ամբողջ գույքը։

Եկեղեցին միշտ էլ եղել է շահագործման զենքերից մեկը։ Այդ պատճառով էլ սովետական պետությունը 1918 թվի փետրվարի 2-ին (հունվարի 20-ին) օրենք ընդունեց՝ եկեղեցին պետությունից և դպրոցը եկեղեցուց անջատելու մասին։

Հայոց հոգևորականության կենտրոնը հանդիսանում էր Էջմիածնի վանքը, որը անցյալում ինչպես քաղաքական-գաղափարական, նույնպես և տնտեսական խոշոր ուժ էր։

Նա դեռ 19-րդ դարի սկզբից մուլքագարական իրավունքով տիրում էր մի քանի խոշոր գյուղերի՝ Էջմիածին, Եղվարդ, Օշական, Մուղնի (Աշտարակի շրջան) և Մաստարա (Թալինի շրջան)։ Վանքն ուներ խոշոր տնտեսություն՝ ջրաղացներ, դինգեր, խոշոր քանակի խաղողի և պտղատու ծառերի այգիներ և այլն, որոնք տարեկան հսկայական գումարների հասնող եկամուտ էին բերում վանքին։

Բացի այդ, Էջմիածնի վանքը ֆինանսական օգնություն էր ստանում ոչ միայն Ռուսաստանի հայ բուրժուազիայից, այլև՝ իբրև հայոց հոգևոր կենտրոն, միաժամանակ խոշոր չափերի հասնող գումարներ էր ստանում հայ գաղութների՝ Ամերիկայի, Հնդկաստանի, Եգիպտոսի, Թյուրքիայի և այլ երկրների հայ խոշոր բուրժուազիայից։

Անցյալում դպրոցը եկեղեցուն կից լինելու հետևանքով և ցարական Ռուսաստանի կողմից քաղաքական հատուկ նպատակներով 1836 թ. մարտի 11-ին «շնորհված» հայ լուսավորչական եկեղեցու գործերի կառավարման մասին «Պոլոժենիայով» Էջմիածնի վանքն ուներ եկեղեցական ծխական դպրոցների լայն ցանց, թեմական հոգևոր դպրոցներ, հոգևոր ճեմարան Էջմիածնում՝ աստվածաբանական 3-ամյա բարձր կուրսերով, նույնպես և հարուստ ձեռագրատուն-մատենադարան, թանգարան, տպարան և այլն։

Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակից հետո, Հայկական ՍՍՌ Ռևկոմը 1920 թվի դեկտեմբերի 17-ին դեկրետ հրապարակեց՝ «Հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկությունների պետականացման մասին»։[2]

Այդ դեկրետով պետական սեփականություն էին հայտարարվում դպրոցները, թանգարանները, գրադարանները, տպարաններն իրենց ամբողջ շարժական և անշարժ գույքով և հանձնվում էին Լուսժողկոմատի տնօրինությանը բանվորա-գյուղացիական մասսաների կրթական կարիքների համար օգտագործելու։

Եկեղեցու ազդեցությունն անցյալում տարածվում էր նաև ընտանիքի, ամուսնության գործերի վրա։ ՀՍՍՌ Ռևկոմի 1920 թ. դեկտեմբերի 20-ի «Քաղաքացիական ակտերի գրանցման մասին» դեկրետով[3] քաղաքացիական կացության ակտերի գրանցման ֆունկցիաները վերցվեցին հոգևորականության ձեռքից և հանձնվեցին տեղական ռևկոմների համապատասխան բաժիններին։

---

[1] Դեկրետների և որոշումների հավաքածու, 1921 թ., ոգոստոս, № 3, հոդվ. 21։

[2] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1920—1921 թթ., հոդվ. 21։

[3] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1920—1921 թ.թ., հոդվ. 38։

ՀՍՍՌ Լուսժողկոմատի 1920 թ. դեկտեմբերի 31-ին հրատարակած հրամաններով՝ արգելվում են կրոնական առարկաների դասավանդումը և կրոնական դավանանքի ծես կատարելը դպրոցներում, նաև արգելվում է հոգևոր կոչում ունեցող անձանց որևէ պաշտոն ունենալ դպրոցներում և կուլտուր-կրթական հիմնարկներում։

Այսպիսով, վերոհիշյալ ձեռնարկումներով սովետական իշխանությունը ոչնչացրեց աշխատավորության վրա եկեղեցու ունեցած տնտեսական, քաղաքական և գաղափարական ազդեցությունը։

Սրանք էին իրավաբանական այն մի շարք կարևորագույն ակտերը, որոնց հիման վրա Սովետական Հայաստանում ևս կիրառվեց էքսպրոպրիատորների էքսպրոպրիացիան և սովետական իշխանության տնտեսական բարձունքների ամրացման քաղաքականությունը։

Ընկեր Ստալինը «Լենինիզմի հիմունքների մասին» աշխատության մեջ գրում է. «... Ազգային հարցը կարող է լուծվել միմիայն պրոլետարական ռևոլյուցիայի կապակցությամբ և նրա հողի վրա»։[1]

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան լուծեց այդ կարևորագույն հարցը։ Կոմունիզմի մեծագույն ուսուցիչներ՝ Մարքսի և Էնգելսի գործը անշեղորեն շարունակող, պրոլետարական ռևոլյուցիայի հանճարեղ կազմակերպիչ և ղեկավարներ՝ ընկերներ Լենինի և Ստալինի ստորագրություններով 1917 թվի նոյեմբերի 2 (15)-ին հրատարակվեց՝ «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որը հայտարարեց՝ Ռուսաստանի ժողովուրդների իրավահավասարությունը և սուվերենությունը, նրանց ազատ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև ինքնուրույն պետություն կազմելը, նաև ամեն տեսակ արտոնությունների ու սահմանափակումների վերացումը և բոլոր ազգային փոքրամասնությունների ու ազգագրական խմբերի ազատ զարգացումը։

Կիրառելով ազգային փոքրամասնություններին ճնշելու և ջարդերի շովինիստական քաղաքականությունը՝ դաշնակների կառավարությունը ադրբեջանական բոլոր գյուղերում կազմակերպեց սոսկալի ջարդարարություն։

Ահա թե այդ առթիվ ինչ է ասել ընկեր Ի. Վ. Ստալինը ՌԿ(բ) Պարտիայի 12-րդ համագումարում տված զեկուցման մեջ։

«Անդրկովկասը վաղ ժամանակներից հանդիսացել է կոտորածի ու խառնակչության ասպարեզ, իսկ հետո, մենշևիզմի ու դաշնակների օրով՝ պատերազմների ասպարեզ։ Դուք գիտեք վրացա-հայկական պատերազմը։ 1905 թվականի սկզբի ու վերջի կոտորածը Ադրբեջանում ձեզ նույնպես հայտնի է։

Ես կարող եմ մի շարք շրջանների անուններ տալ, որտեղ մեծամասնություն կազմող հայերը կոտորել են բնակչության ամբողջ մնացած մասին, որ բաղկացած էր թաթարներից, օրինակ, Զանգեզուրը։ Կարող եմ մատնանշել մի ուրիշ գավառ— Նախիջևանը։ Այնտեղ գերակշռողը թաթարներն են եղել, և նրանք կոտորել են բոլոր հայերին։ Դա եղել է իմպերիալիզմի լծից Հայաստանի ու Վրաստանի ազատագրելուց հենց առաջ։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 6, էջ 163։

(«Մի ձայն տեղից. «Իրենց ձևով են լուծել ազգային հարցը»։ Իհարկե, այո էլ ազգային հարցի լուծման որոշ ձև է։ Բայց այդ լուծման սովետական ձև չէ»։[1] Այսպիսով, նացիոնալիստական կառավարությունների տիրապետության օրոք ազգային բախումներն ու ընդհարումները ավելի սուր, ավելի արյունալի էին Անդրկովկասի իրականության մեջ, քան նույնիսկ ցարիզմի տիրապետության ժամանակ։

ՀՍՍՌ Ռնկոմը անմիջապես ձեռնարկեց ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը։ Նա կիրառեց բոլոր ազգությունների իրավահավասարության սկզբունքը, Ներքգործժողկոմատին կից կազմվեց հատուկ բաժին՝ ազգային փոքրամասնությունների գործերի համար։ Պետական նյութական միջոցներ ստեղծվեցին անցյալում ճնշված ազգային փոքրամասնությունների, հատկապես տուժած ադրբեջանական ազգաբնակչությանը, իրենց կործանված բնակատեղերը վերադառնալու և տնտեսությունները վերականգնելու համար։

Այնուհետև, սովետական իշխանությունը միջոցներ ձեռք առավ և պայմաններ ստեղծեց ազգային փոքրամասնությունների ազգային կուլտուրական վերածնման ու զարգացման համար, ստեղծելով դպրոցներ, գիր ու գրականություն նրանց մայրենի լեզվով։ Սովետական իշխանությունը ամեն կերպ աշխատում էր ազգային փոքրամասնությունների աշխատավորներին մասնակից անել պետական շինարարությանը, երկրի տնտեսական վերականգնմանը, մանավանդ գյուղական, գավառային, տեղական վարչական օրգանների աշխատանքներին։

ՀՍՍՌ Ռնկոմը 1920 թվի դեկտեմբերի 9-ին հրատարակեց դեկրետ՝ «Պետական լեզվի մասին»,[2] որով Ռեսպուբլիկայի սահմաններում պետական լեզուն ճանաչվում էր հայերենը, իսկ ադրբեջանական վայրերում հայերենին կից նաև ադրբեջաներենը։

ՀՍՍՌ Լուսժողկոմատի կազմակերպման առաջին իսկ օրերից, ազգային փոքրամասնությունների դպրոցական-կրթական գործը հատուկ ուշադրության առարկա է դառնում։

Այդ գործը կազմակերպելու համար հրահանգիչներ են հրավիրվում բոլոր ազգային փոքրամասնություններից, իսկ հետագայում (1923 թվի հունվարից) Լուսժողկոմատին կից կազմվում է հատուկ բաժին՝ Ազգային փոքրամասնությունների խորհուրդ, որի միջոցով Լուսժողկոմատը կազմակերպում և ղեկավարում է նրանց կրթական գործը։

Այդ բոլորի հետևանքով է, որ Սովետական Հայաստանում նախկինում իրար բզկտող, իրար ոչնչացնելու ձգտող ազգությունները մոռացության են տալիս ու պատմության գիրկը նետում ազգային փոխադարձ ճնշումներն ու թշնամանքը։ Նրանք ապրում են խաղաղ համակեցությամբ իրենց ընդհանուր, հարազատ հայրենիքում և ձեռք-ձեռքի տված համերաշխ աշխատում երկրի շինարարության մեջ, քայքայված ժողովրդական տնտեսությունը վերականգնելու և բանվորների, աշխատավոր գյուղացիների տնտեսական ու կուլտուրական մակարդակը միահամուռ ուժերով բարձրացնելու համար։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 279։

[2] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Գետնրատ, Էջմիածին, 1920—1921 թթ., հոդվ. 3։

ՀՍՍՌ Ռևկոմը անմիջապես կազմակերպում է Սոցապժողկոմատ, որի 1920 թվի դեկտեմբերի 16-ի՝ «Սոցիալական ապահովության տեղական բաժիններ հիմնելու մասին» հրամանով, Երևանի և բոլոր քաղաքային ու գավառական Ռևկոմներին կից հիմնվում են սոցապ բաժիններ՝ «բոլոր աշխատավորների, նրանց ընտանիքների, աշխատանքի անընդունակների, հաշմանդամների, կոնտրռևոլուցիայի և տարերային չարիքներից անխնամ մնացած մանուկների սոցիալական ապահովության գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու, ինչպես նաև կոնտրռևոլուցիայից հալածվածներին համահավասար օգնություն հասցնելու համար»։[1]

Ահա այն օրենքները, որ իրականացրին ՀՍՍՌ Ռևկոմը՝ Հայաստանի սովետական իշխանությունը, որոնք և հիմք հանդիսացան ու հետագայում իրենց օրենսդրական ամրապնդումը ստացան Հայկական ՍՍՌ 1922 թվի Կոնստիտուցիայի մեջ։

* * *

Պետական շինարարության մեջ կարևորագույն հարցերից մեկը երկրի վարչա-տերիտորիալ բաժանման հարցն է, որպեսզի հնարավոր լինի ավելի լավ կազմակերպել երկրի պետական-վարչական կառավարումը։

Սովետական պետության հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ պետական-վարչական կառավարումը կազմակերպվի այնպես, որպեսզի նա, հատկապես ստորին ապարատը, օրինաչափ գործունեություն ունենալով, շատ մոտ լինի երկրի ժողովրդական տնտեսությանը, կուլտուրայի և այլ օբեկտներին ու աշխատավոր լայն մասսաներին՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ աշխատավոր մասսաները՝ բանվորներն ու գյուղացիները իրենց մոտ զգան պետական ապարատին, երկրի կառավարման օրգաններին, իրենց ամենօրյա կարիքի համար ժամանակին դիմելով այդ օրգաններին։ Հիշյալ հանգամանքը մեծ մասամբ կախված է երկրի վարչա-տերիտորիալ նպատակահարմար բաժանումից։ Ցարական Ռուսաստանի վարչատերիտորիալ բաժանումը կառուցված էր այնպես, որ լրիվ կերպով համապատասխանում էր բուրժուա-կալվածատիրական դիկտատուրային և նրա խնդիրների իրականացմանը։ Ցարական Ռուսաստանը վարչա-տերիտորիալ տեսակետից բաժանվում էր նահանգների, նահանգները— գավառների, գավառներն իրենց հերթին՝ վոլոստների, որոնք միավորում էին մի շարք գյուղեր, առանց հաշվի առնելու ազգային և տնտեսական առանձնահատկությունները։

Ցարիզմը ոստիկանական-լրտեսա-վարչական նպատակներով՝ տնտեսության տեսակետից միասնական ռայոնները արհեստականորեն բաժանում էր վարչական սահմաններով։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան ջարդ ու փշուր անելով բուրժուական-կալվածատիրական հին պետական մեքենան, ոչնչացրեց նաև նրա վարչական-տերիտորիալ հին բաժանումը։

Սովետական Ռուսաստանում երկրի նոր վարչա-տերիտորիալ բաժանումը կատարվեց հաշվի առնելով տնտեսական, կենցաղային պայմանները, աշխարհագրական դիրքը, ազգային առանձնահատկությունները և այլն։

---

1 Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1920 21 թ.թ., հոդվ 19։

Նախօրոք կազմված վարչական վերակառուցումը կիրառող հանձնաժողովի աշխատանքների հիմքը կազմում էր այն միտքը, թե անհրաժեշտ է Հայաստանը բաժանել տնտեսական միատեսակ գավառակների և նրանց տալ կառավարական ակտիվ ֆունկցիաներ։ Իսկ գավառակները, ըստ վարչական հարմարությունների, պետք է միանային և կազմին գավառներ, որտեղ պետք է կենտրոնանային առավելապես հսկողության և ղեկավարության ֆունկցիաները։ Հանձնաժողովի կազմած վարչական բաժանման նախագիծը հատուկ կերպով քննարկվեց Դավ. ռևկոմների նախագահների 1921 թ. հուլիսի 20-ի խորհրդակցությանը և այնուհետև իբրև ՀՍՍՌ ժողկոմսովետի դեկրետ՝ «ՀՍՍՌ վարչական վերաբաժանումների մասին» հրապարակվեց 1921 թ. հուլիսի 20-ին (նույն օրը)։

Համաձայն այդ դեկրետի, Հայաստանը վարչա-տերիտորիալ առումով բաժանվում էր 33 գավառակների և 8 գավառների, որը այնուհետև՝ Զանգեզուրի ավելացումով դարձավ 9։ Երևան քաղաքը, Երևանի գավառի մեջ չէր մրանում և վարչական տեսակետից գավառին համապատասխան առանձին միավոր էր կազմում։[1] Վարչական այդպիսի բաժանումը սովետական ապարատն ավելի մոտեցրեց մասսաներին, այն ավելի հկուն և օպերատիվ դարձրեց։

Սովետական իշխանությունը Հայաստանում արդեն 1921 թվի ապրիլից անցել էր նոր տնտեսական քաղաքականության՝ ՆԷՊ-ի կիրառմանը, որով աստիճանաբար վերացվում էր Հայաստանի տնտեսական մեկուսացումը, վերականգնվում էին տասնյակ տարիների ընթացքում ստեղծված տնտեսական կապերը Անդրկովկասյան և միութենական շուկաների հետ, այդ հիման վրա սկսվում էր քայքայված ժող. տնտեսության վերականգնումը, ՆԷՊ-ը ամրացնում էր գյուղի և քաղաքի տնտեսական զոդումը առևտրի միջոցով, ստեղծելով տնտեսական նախադրյալներ գյուղատնտեսության, արդյունաբերության, հետևաբար խաղաղ շինարարության զարգացման համար։ Այդպիսի պայմաններում հնարավորություն էր ստեղծվում անցնելու սովետների ընտրություններին, իբրև սովետական իշխանության հիմնական օրգանների, իբրև պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձևի։ Ռևկոմներն արդեն կատարել էին իրենց պատմական գերը, արդեն անհրաժեշտ էր կատարել ինչպես պետական իշխանության տեղական օրգանների՝ Սովետների, նույնպես և իշխանության կենտրոնական օրգանների ընտրությունները՝ սովետական դեմոկրատիզմի սկզբունքներով։

Վերոհիշյալ նպատակով էլ ՀՍՍՌ Ժողկոմսովետը 1921 թվի նոյեմբերի 17-ին հաստատեց «Ժամանակավոր կանոնակարգություն— պատգամավորական Սովետի գործադիր Կոմիտեների և սովետների համագումարների մասին»։[2]

Այդ կանոնագրությամբ սահմանվեց, որ քաղաքներում, գյուղերում, գավառակներում և գավառներում իշխանության օրգանները հանդիսանում են սովետները, բոլոր սովետների ընտրություններից հետո բարձրագույն օրգանը հանդիսանում է Համանայաստանյան Սովետների համագումարը, որը և

---

[1] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 2-րդ. Պետրատ, Էջմիածին, 1921 թ. հոդվ. 71։ Հետագայում ՍՍՌ Միությունում սահմանված ընդհանուր սկզբունքների համապատասխան, Սովետական Հայաստանում ևս 1929—1930 թ.թ. կատարվեց գավառակների և գավառների վերացումը և ռայոնների կազմակերպումը։

[2] Դեկրետների և որոշումների ժողովածու, 1921 թ. նոյեմբեր, դեկտեմբ. № 13, հոդվ. 87։

հանդիսանում է ՀՍՍՌ բարձրագույն իշխանությունը, իսկ համագումարների միջանկյալ ժամանակամիջոցում նույնպիսի իշխանություն հանդիսանում է համագումարի կողմից ընտրվող ՀՍՍՌ Կենտգործկոմը, որը հաշվետու և պատասխանատու է իրեն ընտրող Համահայաստանյան Սովետների համագումարի առաջ։

Առաջին ընտրություններից հետո, հետագայում, ըստ այդ կանոնադրության 15-րդ հոդվածի, «Հայաստանի Սովետների համագումարը հրավիրվում էր Հայաստանի Կենտգործկոմի կողմից՝ ըստ իր հայեցողության կամ գավառային սովետների պահանջով, երբ այդ կազմում է ամբողջ ռեսպուբլիկայի ազգաբնակչության մեկ երրորդ մասից ոչ պակաս, բայց ոչ ուշ, քան տարեկան մեկ անգամ»։

Ռևկոմների փոխարեն պետական իշխանության տեղական օրգաններ պիտի հանդիսանային, համաձայն «ՀՍՍՌ վարչական վերաբաժանումների մասին» դեկրետի, գյուղսովետները, քաղաքներում պատգամավորների սովետները, գավառամասերում և գավառներում պատգամավորական սովետների համագումարները։ Այդ համագումարների մեջ ընկած ժամանակամիջոցում նրանց փոխարինող և իշխանությունն իրականացնող օրգանները հանդիսանում էին նրանց կողմից ընտրվող գործադիր կոմիտեները, որոնք ամբողջությամբ հաշվետու և պատասխանատու էին իրենց ընտրող պատգամավորների սովետների կամ սովետների համագումարների առաջ։

Ըստ այդ կանոնադրության 16-րդ հոդվածի, Սովետական իշխանության տեղական օրգանների պարտականություններն էին՝

ա) Կյանքում կիրառել սովետական իշխանության համապատասխան բարձր օրգանների բոլոր որոշումները։

բ) Բոլոր միջոցները ձեռք առնել տվյալ վայրի կուլտուր-տնտեսական կյանքը բարձրացնելու համար։

գ) Լուծում տալ այն բոլոր հարցերին, որոնք զուտ տեղական բնույթ են կրում։

դ) Միացնել ամբողջ սովետական գործունեությունը տվյալ տերիտորիայի սահմաններում։

Միաժամանակ սովետների համագումարները և նրանց գործադիր կոմիտեները իրավունք ունեին վերահսկելու ստորադաս տեղական սովետների գործունեությանը։

Սովետական իշխանության տեղական օրգանների վրա դրված վերոհիշյալ խնդիրներն իրագործելու համար պատգամավորական սովետներին (գյուղական, քաղաքային և գործադիր կոմիտեներին (գավառամասային, գավառական) կից կազմվում էին համապատասխան բաժիններ՝ վարիչների գլխավորությամբ։

Ելնելով ՌՍՖՍՌ 1918 թ. Կոնստիտուցիայում նախատեսված ընտրական իրավունքի հիմնական սկզբունքներից և տվյալ ժամանակում Հայաստանում դասակարգային ուժերի դասավորման իրադրությունից, կանոնադրության 19-րդ հոդվածն արձանագրում էր, որ «Սովետներում ընտրելու և ընտրվելու իրավունքից օգտվում են անկախ դավանանքից, ազգությունից, նստակեցությունից և այլն՝ Հայաստանի Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկայի երկսեռ քաղաքացիները, որոնց 18 տարին լրացած կլինի ընտրությունների օրը. հետևյալները՝

ա) Նրանք, ովքեր իրենց ապրուստի միջոցները ձեռք են բերում արտադրական, կամ հանրօգուտ աշխատանքով, այլև նրանք, որոնք զբաղվում են տնային տնտեսությամբ, որ արտադրական աշխատանքի հնարավորություն է ապահովում առաջինների համար, այն է՝ արդյունաբերության, առևտրի, գյուղատնտեսության և այլ ճյուղերի մեջ զբաղված բոլոր տեսակի և կատեգորիայի բանվորների ու ծառայողների և շահ ստանալու նպատակով վարձու աշխատանքից չօգտվող գյուղացի երկրագործների համար.

բ) Կարմիր զինվորները.

գ) Այն քաղաքացիները, որոնք մտնում են սույն հոդվածի «ա» և «բ» կետերում թված կատեգորիաների մեջ և կորցրել են իրենց աշխատունակությունն այս կամ այն չափով»։

Համաձայն կանոնադրության 20-րդ հոդվածի, ընտրելու և ընտրվելու իրավունքից զրկվում էին.

«ա) Այն քաղաքացիները, որոնք վարձու աշխատավորներ են պահում իրենց շահը բարձրացնելու նպատակով։

բ) Այն անձնավորությունները, որոնք ապրում են ոչ աշխատավորական եկամուտով, այն է՝ կապիտալից ստացված տոկոսներով, ձեռնարկությունների եկամուտով, գույքից ստացված արդյունքով և այլն։

գ) Մասնավոր առևտրականները, առևտրական և վաճառականական միջնորդները։

դ) Վանականներն ու եկեղեցու և կրոնական կուլտերի հոգևոր սպասավորները։

ե) Ցարական և գաշնակների ոստիկանության հատուկ բաժանմունքների և գաղտնի ոստիկանության բաժանմունքների գործակալներն ու ծառայողները, այլև խմբապետները։

զ) Նրանք, ովքեր սահմանված կարգով հանաչվում են հոգեկան հիվանդներ կամ խելագարներ, ինչպես և հովանավորության տակ գտնվողները։

է) Այն բոլոր անձնավորությունները, որոնք շահադիտական և արատավորող հանցագործությունների համար դատապարտված են օրինական կամ դատական դատավճռի կարգով»։[1]

Այսպիսով, պետական իշխանության օրգաններում ընտրելու և ընտրվելու իրավունքից զրկվում էին դասակարգային թշնամին և նման կարգի տարրերը։

Այդ կանոնադրությունը համարվում էր ժամանակավոր, մինչև որ Սովետների Համահայաստանյան առաջին Համագումարում մշակվեր և հաստատվեր ՀՍՍՌ Կոնստիտուցիան։ Այդ կանոնադրության հիման վրա ընտրությունների անցկացման կազմակերպչական աշխատանքները հանձնարարվեցին ՀՍՍՌ Ներքգործժողկոմատին։ 1921 թ. նոյեմբերի վերջերից սկսվեց սովետների ընտրական լայն կամպանիա։ Դասակարգային թշնամի տարրերը՝ դաշնակցական և այլ նացիոնալիստական պարտիաների թափթփուկները, կուլակները, նեպմանները և այլն, ամեն միջոցի դիմում էին սովետների ընտրությունները ձախողելու, կամ սովետներում իրենց ներկայացուցիչներին անցկացնելու համար, այդպիսով ցանկանալով նրանց խցկել սովետական պետական իշխանության օրգանների մեջ։ Սակայն նրանք չարաչար սխալվեցին,

---

1 Դեկրետների և որոշումների ժողովածու, 1921 թ., նոյեմբեր-դեկտեմբեր, № 13, հոդվ. 87։

որովհետև բոլշևիկյան ծավալուն ագիտացիան, բանվորների, բատրակների և չքավոր գյուղացիության ամուր կապը և միջակի ակտիվ մասնակցությունը այն հետևանքը ունեցան, որ դեկտեմբերի վերջերին հաջողությամբ ավարտվեցին պստգամավորների տեղական սովետների ընտրությունները։ Սովետներում ընտրվեցին աշխատավոր մասսաների լավագույն ներկայացուցիչները։

Մենք թվարկեցինք և վերլուծեցինք կարևորագույն իրավական ակտերը, որոնք վերաբերվում են Հայաստանի Սովետական Իշխանության ՀՍՍՌ պետական շինարարության գծով մինչ կոնստիտուցիայի ընդունումը կատարած աշխատանքներին, որոնք և մյուս բոլոր կարգի դեկրետների հետ առաջընթաց քայլ հանդիսացան և ուղիներ նշեցին Հայկական ՍՍՌ Կոնստիտուցիայի ստեղծման համար։

1922 թ. հունվարի 30-ին հրավիրվեց ՀՍՍՌ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների առաջին համագումարը, որը և փետրվարի 2-ին հաստատեց Հայկական ՍՍ Ռեսպուբլիկայի, հայ ժողովրդի պատմության մեջ առաջին, կոնստիտուցիան։

О. Месропян

Юридические акты, предшествовавшие первой Конституции Армянской Советской Социалистической Республики

Резюме

Великая Октябрьская социалистическая революция открыла новые пути для освобождения угнетенных веками народов.

Воодушевленные победами этой революции, рабочие и крестьяне Армении под непосредственным руководством партии большевиков и ее гениальных вождей—Ленина и Сталина, с братской помощью героической Красной Армии и великого русского народа 29 ноября 1920 года свергли дашнакское правительство палачей армянского народа и установили в Армении советскую власть. «Только идея Советской власти принесла Армении мир и возможность национального обновления», — писал товарищ Сталин.

28 ноября 1920 года в Казах-Карвансарае (Иджеван) под непосредственным руководством партии большевиков был организован орган власти восставших рабочих и крестьян Армении, военно-революционный комитет – Армревком, который явился первым действительным органом государственной власти независимого национального государства армянского народа.

Декларацией от 29 ноября 1920 года Армревком объявил Армению **Советской Социалистической Республикой.**

Этой декларацией была открыта новая и блестящая страница в истории армянского народа.

Являясь единственным высшим органом государственной власти и центральным органом государственного управления, Армревком 2 декабря 1920 года возглавил в Ереване руководство вооруженным восста-

нием, уничтожил старый государственный аппарат и создал новый революционный аппарат как в центре, так и на местах, организуя уездные, волостные и сельские ревкомы исключительно из трудящихся.

Ревком Армении, как центральный орган, осуществлял свою власть и свое руководящее влияние в стране через организованные на местах ревкомы, укреплял вместе с ними социалистическую революцию на местах и предпринимал неотложные меры для восстановления разрушенного народного хозяйства.

В мае 1921 г. Ревком Армении реорганизовался в Совет Народных Комиссаров ССР Армении, председателем которого был назначен Ал. Мясникян. После этого, Совет Народных Комиссаров ССР Армении стал выступать как единственный высший орган государственной власти и государственного управления.

Под руководством Ал. Мясникяна Совнарком широко развернул работу по укреплению государственно-административного аппарата и восстановлению разрушенного народного хозяйства страны.

Первая Конституция Советской Армении была принята 2-го февраля 1922 года, т. е. спустя 1 год и 2 месяца после установления советской власти в Армении.

Непосредственно после установления советской власти в Армении, до принятия Конституции, Ревком Армении, а впоследствии и Совнарком издали ряд декретов, приказов и постановлений, в которых нашли отражение основные успехи, завоёванные трудящимися Армении в различных областях государственного и социалистического строительства, а именно:

а) установление советской власти в Армении, уничтожение дашнакского аппарата и создание аппарата Советского государства— до 1922 г. ревкомов, централизовавших всю власть в своих руках, а впоследствии Советов, избранных как органы диктатуры пролетариата.

б) экспроприация экспроприаторов, ликвидация частной собственности на землю и орудия и средства производства, овладение советской властью Армении командными высотами народного хозяйства и осуществление первых шагов к социализму.

в) установление содружества и равенства национальностей, а также введение самых демократических прав и свобод для трудящихся Армении.

г) государственное строительство в целом, проведенное советской властью Армении, явившееся основой для создания первой Конституции Республики.

В статье подробно рассматриваются многочисленные декреты, приказы и постановления Армревкома и Совнаркома.

Они являются теми юридическими актами, которые в дальнейшем получили свое законодательное подтверждение в первой Конституции.

30 января 1922 года был созван первый съезд Советов рабочих, крестьянских и красноармейских депутатов Армении. 2 февраля съезд впервые в истории и в истории государственности армянского народа утвердил первую действительную Конституцию ССР Армении.